Հիմնավորում

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնքում մանկապարտեզի շենքի վերանորոգման վերաբերյալ

Դաշատավան համայնքի մասին

Դաշատավան համայնքը ունի շուրջ 2286 բնակիչ, որից 70-ը 3-5 տարեկան երեխաներ են: Համայնքում մանկապարտեզի կառուցման ծրագիրն իրականացնելու պարագայում շուրջ 60 երեխա կհանդիսանան ծրագրի շահառուներ:

Հանրօգուտ ծրագիր

Սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է իրականացնել 35,242,490 ՀՀ դրամի վերանորոգման աշխատանքներ: Դաշտավան համայնքի միջոցների հաշվին 2021 թվականին նախատեսվում է իրականացնել շենքի կահավորում անհրաժեշտ պարագաներով և պարսպապատում՝ նախատեսվում է շուրջ 15,000,000 ՀՀ դրամ, իսկ 2022 թվականին կիրականացվի տարածքի բարեկարգում և խաղահրապարակի կառուցում՝ նախատեսվում է շուրջ 10,000,000 ՀՀ դրամ ։

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է կատարել շուրջ 60,242,490 ՀՀ դրամի աշխատանքներ:

Վերոնշյալ աշխատանքները նախատեսվում են կատարել 2020-2022թթ. ընթացքում:

Ծրագրից ակնկալվող արդյունքները

Մանկապարտեզի կառուցումը կնպաստի երեխաների նախադպրոցական կրթության ապահովմանը, երիտասարդ ընտանիքների թվի ավելացմանը և համայնքի առջև ծառացած այլ խնդիրների լուծմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի ապահովել երեխաների համար որակյալ կրթություն: Դաշտավան համայնքի 3-5 տարեկան երեխաներին հնարավորություն կտրվի հաճախելու մանկապարտեզ իրենց համայնքում, ինչպես նաև կստեղծվի շուրջ 16 նոր աշխատատեղ:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնքում մանկապարտեզի շենքի վերանորոգման վերաբերյալ

ՀՀ Արարատի մարզի Դաշտավան համայնքում բնակվում են մոտ 2286 մարդ: Համայնքում ապրող նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և կրթության կազմակերպման համար նպատակահարմար է կառուցել մանկապարտեզի մասնաշենք:

Մանկապարտեզի կառուցումը կնպաստի համայնքում առկա արտագաղթի կանխմանը, երեխաների նախադպրոցական կրթության ապահովմանը, երիտասարդ ընտանիքների թվի ավելացմանը և համայնքի առջև ծառացած այլ խնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առարկություն չունի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնքում մանկապարտեզի շենքի կառուցման վերաբերյալ: